ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, «ԱԼՊԻՆԻԶՄԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն)՝ ի դեմս ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Էդվարդ Ասրյանի, «Ալպինիզմի և լեռնային տուրիզմի հայկական ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Ֆեդերացիա)՝ ի դեմս Ֆեդերացիայի նախագահ Սուրեն Դանիելյանի և «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ Ինստիտուտ)՝ ի դեմս ռեկտոր Դավիթ Խիթարյանի (այսուհետ՝ Կողմեր),

ձգտելով զարգացնել համագործակցությունը լեռնային պատրաստության բնագավառում,

կարևորելով լեռնային պատրաստության զարգացումը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում որպես մարտունակության բարձրացման կարևորագույն միջոց,

վստահություն հայտնելով, որ համագործակցությունը կնպաստի ֆիզիկական պատրաստության և գիտական փորձի փոխանակմանն ու աջակցության ցուցաբերմանը,

համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը պայմանավորվում են համագործակցել սույն հուշագրով նախատեսված ուղղությամբ՝ իրենց հնարավորությունների և միջոցների կիրառմամբ:

ՀՈԴՎԱԾ 2

Սույն հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակներում Կողմերն իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ պատրաստակամություն են հայտնում կազմակերպելու և իրականացնելու լեռնային պատրաստության դասընթացներ՝ համաձայն Կողմերի միջև հետագայում հաստատվող դասընթացի պլանի և ժամանակացույցի, ուսումնակրթական միջոցառումներ և համատեղ հետազոտություններ, գիտական կոնֆերանսներ, սեմինարներ և խորհրդակցություններ:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերը կանցկացնեն համատեղ քննարկումներ համագործակցության ընդլայնման և համագործակցության արդյունավետության բարձրացման հարցերի շուրջ:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն հուշագրով արձանագրվածը բարեխղճորեն կատարելու համար՝ ապահովելով իրականացված գործունեության արդյունքում իրենց հայտնի դարձած պետական, ծառայողական, հեղինակային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների չհրապարակումը և չբացահայտումը:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ և փոխադարձ համաձայնությամբ սույն հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ կամ լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով և կհանդիսանան սույն հուշագրի անբաժանելի մասը: Այդ արձանագրությունները կիրառվում են սույն հուշագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված կարգով:

ՀՈԴՎԱԾ 6

6.1. Սույն հուշագիրը կիրառվում է Կողմերի ստորագրման օրվանից և գործում է անորոշ ժամկետով:

6.2. Սույն հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

6.3. Սույն հուշագիրը Կողմերից ոչ մեկի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում:

6.4. Սույն հուշագրի կիրառման և մեկնաբանման ընթացքում Կողմերի միջև ծագած տարաձայնությունները կլուծվեն խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

6.5. Սույն հուշագրի գործողության դադարեցումը չի ազդի սույն հուշագրի գործողության ընթացքում սկսված ծրագրերի և նախագծերի կատարման ընթացքի վրա, եթե Կողմերն այլ բան չպայմանավորվեն:

Ստորագրված է Երևան քաղաքում 2023 թվականի փետրվարի 10-ին՝ հայերեն երեք բնօրինակով, որոնք հավասարազոր են:

ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Էդվարդ Ասրյան	Ալպինիզմի և լեռնային տուրիզմի հայկական ֆեդերացիայի նախագահ Սուրեն Դանիելյան	Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ռեկտոր Դավիթ Խիթարյան